

Երբ վարագոյրը բացուի՝ հանդիսականները ուժգին ծափահարութեամբ կ'ողջունեն դերասաններն եւ իրենց երեսը կդարձունեն դէպի օթեակները. շատ անգամ ծափահարութիւն մը կ'լսուի այնպիսի վայրկենի մը մէջ, ուր բնաւ հարկ չկայ ծափ զարնելու: Հանդիսականներէն ոմանք կ'ըսեն.

–Ի՛նչ անպիտան մարդեր կան. հիմա ծափահարութիւն ընելու ի՞նչ կայ:

Եւ չեն գիտեր խեղճերն, որ ծափահարութիւն ընողն խաղին համար չըբաւ, այլ իւր սիրուհիէն ժպիտ մը կամ նշան մը առած ըլլալուն համար ծափ զարկաւ:

Ընդհանրապէս ուրիշ թաղերէն ազգայիններ կու գան թատրոն: Կէտիկ բաշացի շոպյութիւն կհամարի տարին անգամ մը թատրոն երթալը: Եւ արդէն հոս բնակողներուն մեծ մասը ոսկւոյ միայն երկրպագութիւն կ'ընեն եւ ոչ ուրիշ բանի: Կան քանի մը հոգիներ, որ տարին անգամ մը կրնան թատրոնէն ներս մտնել, ան ալ եթէ յաջողին չքշուած պակաս ոսկիները թատրոնի տոմսավաճառին կ'լլեցունել: Եթէ տոմսակավաճառն դիտողութիւն ընելով յայտնէ ոսկւոյ պակաս ըլլալն՝ սա՛ պատասխանը կ'առնէ.

–Եթէ մեր ոսկին պակաս է՝ ձեր տալիք խաղն ալ լման չէ ա՛:

Ուրիշներն ալ տնտեսագիտութեան համար իրենց ընտանիքները կ'առնեն եւ փողոցի մէջ թատերաբեմին ետեւի կողմը կկայնին, որ անկից լսեն ներկայացումն. մէկ մասն ալ տոմսակավաճառի եւ կամ ուրիշ պաշտօնեայի մը հետ խօսքը մէկ ընելով՝ ձրի կմտնէ թատրոնէն, եւ Վարդովեան կը կարծէ, թէ այս անկարգութիւններուն առաջքն առնելով՝ դրամ պիտի վաստկի:

Կէտիկ բաշայի դիրքը բարձր է եւ օդն ալ գէշ չէ. միայն թէ մարդս իւր տունէն մինչեւ որ շուկայ երթայ՝ հազար ու մէկ գոյն փոշիներու մէջ լողայ, եթէ լողալ չգիտնայ՝ խեղդուի:

ԺԲ.

ԻԻՍԿԻԻՏԱՐ ԵԷՆԻ ՄԱՀԱԼԷ

Լսած էք անշուշտ, որ ախտ մը կայ, որու անունն է *ինձի մի՛ դպչիր*, բայց չէիք իմացած հարկաւ, որ այդ ախտն այս թաղին մէջ ծնունդ առած է:

Հիմայ հասկցաք ա՛լ, որ այս թաղին մատ դպցունելու չէ՝ եթէ չէք ուզեր աւելի եւս վատթարացունել զայն: